

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի նիստի թիվ 06/02 որոշմամբ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) կանոնակարգը սահմանում է Հանձնաժողովների գործունեության նպատակն ու հիմնական խնդիրները, իրավասությունները, գործառույթները, Հանձնաժողովի նախագահի և անդամների իրավունքներն ու պարտականությունները, նիստերի աշխատակարգը:
2. Հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնում են ղեկավարվելով Մասնաճյուղի կանոնադրությամբ, գիտական խորհրդի կանոնակարգով և որոշումներով, սույն կանոնակարգով:
3. Հանձնաժողովների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովները ստեղծվում են գիտական խորհրդի գործունեության անընդհատությունն ապահովելու, արդյունավետությունը բարձրացնելու և ընթացքը կառավարելու նպատակով:
5. Հանձնաժողովների գործունեության հիմնական խնդիրներն են՝
 - 1) ապահովել գիտական խորհրդում քննարկվող օրակարգային հարցերի բազմակողմանի ուսումնասիրությունն ու քննարկման արդյունավետությունը,
 - 2) կազմակերպել լուսմներ և քննարկումներ գիտական խորհրդի օրակարգային հարցերի վերաբերյալ, ձևավորել առաջարկություններ, եզրակացություններ և կարծիքներ գիտական խորհուրդ ներկայացնելու համար,
 - 3) մշակել գիտական խորհրդի օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը,
 - 4) իրականացնել գիտական խորհրդի ուսումնական, գիտական, մեթոդական գործառույթների հետ կապված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

6. Գիտական խորհրդին կից ստեղծվում են հետևյալ Հանձնաժողովները.
 - 1) Կրթական ծրագրերի, ուսումնամեթոդական հարցերի և որակի ապահովման,
 - 2) Սոցիալական ծրագրերի և ուսանողության հարցերի,
 - 3) Գիտական կոչումների ներկայացման և մրցութային հարցերի:
7. Հանձնաժողովների կազմերն առաջադրում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում տնօրենը:
8. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել գիտական խորհրդի անդամներ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, գիտամանկավարժական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. **Կրթական ծրագրերի, ուսումնամեթոդական հարցերի և որակի ապահովման հանձնաժողով.**
 - 9.1. նոր կրթական ծրագրերի բացման, նոր մասնագիտությունների, մասնագիտացումների ներդրման և (կամ) գործողների դադարեցման առաջարկությունների վերլուծություն և համապատասխան եզրակացությունների ներկայացում,
 - 9.2. կրթության, գիտության և պրակտիկայի ինտեգրման, կադրային ներուժի և Մասնաճյուղի նյութատեխնիկական հենքի առավել արդյունավետ օգտագործման նպատակով ուսումնական գործընթացի բովանդակության, կազմակերպման և մեթոդական ապահովվածության վերաբերյալ առաջարկությունների վերլուծություն,
 - 9.3. մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը միտված առաջարկությունների քննարկում, համապատասխան փորձի ուսումնասիրում և աշխատանքների պլանավորում,

- 9.4. նոր ամբիոնների և (կամ) լաբորատորիաների ստեղծման, գործողների վերակառուցման և լուծարման վերաբերյալ հարցերի քննարկում և եզրակացությունների ներկայացում,
- 9.5. տնօրենի հրահանգով՝ ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող այլ հարցերի քննարկում:
10. **Սոցիալական ծրագրերի և ուսանողության հարցերի հանձնաժողով.**
- 10.1. աշխատակիցների սոցիալական աջակցության և սոցիալական պաշտպանվածության ուղղությունների առաջնահերթության վերաբերյալ հիմնավորված առաջարկությունների ներկայացում,
- 10.2. աշխատակիցների սոցիալական աջակցության և սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ ներքին իրավական ակտերի քննարկում,
- 10.3. ուսանողների հետ տարվող դաստիարակչական և սոցիալական աշխատանքների գերակա ուղղությունների որոշում,
- 10.4. Մասնաճյուղում ուսանողների հետ տարվող դաստիարակչական, մշակութային և մարզաառողջարարական աշխատանքների արդյունավետության վերլուծություն,
- 10.5. մասնակցություն ուսանողական ինքնավարության զարգացմանը,
- 10.6. ուսանողների ուսման, կենցաղի, հանգստի, ժամանցի և սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ Մասնաճյուղի ներքին իրավական ակտերի քննարկում,
- 10.7. ուսանողների և աշխատակիցների հետաքրքրությունների, հարցումների և պահանջմունքների ուսումնասիրություն,
- 10.8. տնօրենի հրահանգով՝ Հանձնաժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերի քննարկում:
11. **Գիտական կոչումների ներկայացման և մրցութային հարցերի հանձնաժողով.**
- 11.1. գիտական կոչումների շնորհման թեկնածությունների քննարկում,
- 11.2. պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնատեղերի տեղակալման թեկնածությունների քննարկում,
- 11.3. ֆակուլտետի դեկանի, բաժանմունքի վարիչի և ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղերի տեղակալման թեկնածությունների քննարկում,
- 11.4. տնօրենի հրահանգով՝ Հանձնաժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերի քննարկում:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. **Հանձնաժողովն իրավունք ունի.**
- 12.1. Հանձնաժողովի նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ Մասնաճյուղի ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն,
- 12.2. իրենց իրավասության հարցերի շրջանակում վերահսկել գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը,
- 12.3. որպես փորձագետ և խորհրդատու ներգրավել Մասնաճյուղի դասախոսների և աշխատակիցների՝ նրանց համաձայնության դեպքում:
13. **Հանձնաժողովը պարտավոր է.**
- 13.1. ժամանակին մշակել և ներկայացնել առաջարկություններ գիտական խորհրդի աշխատանքային պլանում ընդգրկելու համար,
- 13.2. գիտական խորհրդի նիստից առնվազն 2 օր առաջ գիտական քարտուղարին

- ներկայացնել Հանձնաժողովի իրավասության ներքո գտնվող օրակարգի հարցերի վերաբերյալ առաջարկությունները և որոշումների նախագծերը,
- 13.3. Մասնաճյուղի ստորաբաժանումների հաշվետվությունների քննարկման ժամանակ իր իրավասության շրջանակներում տալ դրանց աշխատանքի վերաբերյալ եզրակացություններ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

- 14.1. ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները և նախագահում Հանձնաժողովի նիստերը,
- 14.2. իրավասու է Մասնաճյուղի ցանկացած կառուցվածքային ստորաբաժանումից և պաշտոնատար անձից ստանալ տեղեկություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար,
- 14.3. գիտական խորհրդի նիստում ներկայացնում է քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովի կարծիքը,
- 14.4. վերահսկում է Հանձնաժողովի իրավասության հարցերի շրջանակում գիտական խորհրդի ընդունած որոշումների կատարման ընթացքը և այդ մասին զեկուցում գիտական խորհրդին:

15. Հանձնաժողովի անդամը՝

- 15.1. իրավասու է Մասնաճյուղի ցանկացած կառուցվածքային ստորաբաժանումից և պաշտոնատար անձից ստանալ տեղեկություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար,
- 15.2. պարտավոր է մասնակցել Հանձնաժողովի նիստերին, կատարել Հանձնաժողովի որոշումներն ու Հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

16. Հանձնաժողովների գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի կամ գիտական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ:
17. Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամկետը որոշում է Հանձնաժողովի նախագահը: Նիստի հրավիրման և օրակարգի մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են ոչ ուշ, քան նիստից 2 օր առաջ:
18. Անհետաձգելի և հրատապ լուծում պահանջող հարցերի քննարկումը կարող է իրականացվել գիտական խորհրդում՝ առանց Հանձնաժողովի կողմից նախնական քննարկման:
19. Անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել քննարկվող հարցի հետ առնչություն ունեցող Մասնաճյուղի գիտամանկավարժական կամ վարչական կազմերի ներկայացուցիչներ:
20. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրա աշխատանքին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչը Հանձնաժողովի նախագահի ձայնն է:

21. Եթե Հանձնաժողովի անդամը որոշման վերաբերյալ ունի այլ (հատուկ) կարծիք, ապա այն արձանագրվում է և կարող է հնչեցվել գիտական խորհրդի նիստում տվյալ հարցի քննարկման ժամանակ:
22. Հանձնաժողովի որոշումը գիտական խորհրդում հարցի քննարկման համար ունի երաշխավորական կամ խորհրդատվական նշանակություն:
23. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում և ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը ներկայացվում է գիտական խորհրդի քարտուղարին:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

24. Հանձնաժողովները յուրաքանչյուր տարի գիտական խորհրդին ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների վերաբերյալ:
25. Հանձնաժողովների աշխատանքի ընթացիկ վերահսկողությունն իրականացնում է գիտական խորհրդի նախագահը:
26. Հանձնաժողովների վրա դրված գործառույթների պատշաճ կատարման համար պատասխանատու են դրանց նախագահները:

IX. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Սույն կանոնակարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են գիտական խորհրդի որոշմամբ:
28. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդում քվեարկությամբ հաստատվելուց անմիջապես հետո: